



Դիտողություններ և առաջարկություններ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գնումների մասին օրենքի նախագծի վերաբերյալ

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ օրենքի նախագծում ներառվել են «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության որոշ առաջարկություններ (բողոքարկման բավարարման պարագայում պատվիրատուներին ևս պատասխանատվության ենթարկելու դրույթը, Բողոքարկման խորհրդից Կենտրոնական բանկի (ԿԲ) ներկայացուցչի ֆորմալ պահանջի չկատարումը և այլն): Սակայն, դրա մասին որևէ խոսք չկա օրենքի նախագծի ընդունման հիմնավորման մեջ, որտեղ նշված է միայն ԵՄ Սիզմայի և ՎՉԵԲ-ի փորձագետների մասին:

Բացի այդ, առկա են մի շարք հիմնահարցեր որոնք պարբերաբար բարձրաձայնվում են ԹԻՀԿ-ի կողմից, սակայն սույն նախագծով այդ հիմնահարցերի լուծման ուղղությամբ որևէ կոնկրետ քայլերի իրականացում չի նախատեսված: Դրանցից են, օրինակ, շահերի բախման և դրանց հայտարարգրման հետ կապված հարցերը, ԿԲ-ից բողոքարկման խորհրդի անդամ ներկայացնելու ֆորմալ պահանջը, ապրանքահումքային բորսաներից գնումների իրականացման կարգը, պետական մասնավոր գործընկերության համատեքստում գնումների իրականացման առանձնահատկությունների ներկայացումը, Էլեկտրոնային գնումների համակարգի բացակայությունը¹, և այլն: Հասկանալի չէ, թե ով է պատասխանատու լինելու գնումների վիճակագրության հավաքագրման և հրապարակման համար: Սահմանված չեն հրապարակման հաճախականությունը և ժամկետները: Վերջապես, պարզ չէ, թե ինչ դերակատարում է ունենալու Գնումների աջակցման կենտրոնը (ԳԱԿ):

1. Հոդված 2-ում որտեղ ներկայացվում են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները առաջարկում ենք ավելացնել <http://www.azdarar.am>-Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք:

2. Հոդված 2-ում ավելացվել է **հատուկ կամ բացառիկ իրավունք՝** հասկացությունը, սակայն նման իրավունքը կարծում ենք պետք է ավելի կանոնակարգել՝ հակառակ դեպքում այն խիստ ռիսկային է:

3. Հոդված 4-ի 2-րդ մասում սույն օրենքի նորմերի նկատմամբ միջազգային պայմանագրերի նորմերի գերակայության մատնանշումն ավելորդ է, քանի որ միջազգային պայմանագրերը գերակա են բոլոր օրենքների պարագայում:

4. Հոդված 5-ի 1-ին մասի 3-րդ կետում նշվում է, որ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք կամ որոնց գործադիր մարմնի

¹ Այս կապակցությամբ առաջարկում ենք վերանայել էլեկտրոնային գնումների վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից 2006թ հունվարի 26-ին ընդունված N 137-Ն¹ որոշման ժամկետները՝ դրանք համապատասխանեցնելով ներկա իրավիճակի հետ:



Ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել խարդախության, ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող այլ հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է: Լիազոր մարմինը պետք է հրապարակի նշված անձանց ցանկը:

5. Հոդված 5-ի 1-ին մասի 4-րդ կետում նշվում է, որ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար: Լիազոր մարմինը, ՏՄՊՊՀ-ի հետ համագործակցելով, պետք է այս մասով ևս հրապարակի այդ անձանց ցանկը:

6. Հոդված 5-ի 2-րդ մասով նախկինի համեմատ ավելի հստակ է կանոնակարգվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու ժամկետները: Այնուհանդերձ մնացած կետերի մասով (հոդված 5-ի 1-4 կետեր) ժամկետները կանոնակարգված չեն: Առաջարկում ենք կանոնակարգել նաև այդ ժամկետները:

7. Հոդված 5-ի 5-րդ մասում նշվում է, որ «Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության ապահովման շրջանակում մասնակիցը, անհրաժեշտության դեպքում կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա»: ԹԻՀԿ կարծիքով, նման սահմանումը կարող է նպաստել միջնորդավորված գնումների, օրինակ պայմանագրեր կնքվեն հետո դրանք ամբողջությամբ կամ զգալի չափով փոխանցվեն ենթակապալի: Սույն դրույթը կարող է նպատակահարմար լինել միայն կոնսորցիումների և դրանց կարգավորման համատեքստում:

8. ԹԻՀԿ մոնիտորինգի ընթացքում նկատվել է, որ մի շարք մասնակցիներ հաճախակի տուգանվում են նույնիսկ շատ փոքր գումարի պարտք ունենալու համար (ընդ որում հաճախ դրանք առաջանում են հայտ ներկայացնելու օրը): Նման դեպքերում օրենքի նախագծով առաջարկվող 2 տարի սահմանափակումը չափազանց կոշտ պատիժ է: Առաջարկում ենք սահմանել 1 տարվա սահմանափակում, իսկ երկրորդ տարվա արգելքը կարող է չեղյալ համարվել այն դեպքում, երբ մասնակիցը համաձայն է վճարել մրցույթի առարկա հանդիսացող պայմանագրային արժեքի կրկնապատիկը:

9. Հոդված 6-ի առաջին մասում նշվում է, որ «Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք»: Կարծում ենք նման պնդումը բացարձակ չէ, քանի որ ԵԱՏՄ անդամ երկրներին մինչև 70 մլն դրամ գնումների պարագայում գնային տեսանկյունից տրված է 15% նախապատվություն:



10. Հոդված 6-ի երկրորդ մասը չափազանց կարևոր է, մասնավորապես ԹԻՀԿ իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարության գնումների ուսումնասիրություն, որի համատեքստում կատարված առաջարկություններից մեկը վերաբերում է գնումների գործընթացին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար որոշ երկրի ռեզիդենտների մասնակցության սահմանափակման հարցին:

11. Հոդված 8-ի 5-րդ մասում նշվում է, որ «Գնումների տարեկան հաշվետվությունը կազմելու և հրապարակելու նպատակով պատվիրատուները լիազորված մարմին են ներկայացնում հաշվետվություններ»: Այնուհանդերձ հաշվետվությունները ներկայացնելու և լիազորված մարմնի կողմից դրանք հրապարակելու պարբերականությունը, ձևաչափը և բովանդակությունը սահմանված չեն, ինչը, մեր կարծիքով, պետք է շտկվի:

12. Հոդված 9-ի երրորդ մասում նշվում է, որ «Անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է»: Ցանկալի կլինի, որ ժամկետները չպարունակեն երկիմաստություններ, մասնավորապես այդ տրամաբանության տեսանկյունից անհասկանալի է «առնվազն» բառի առկայությունը: Բացի այդ, կարծում ենք նպատակահարմար է ժամկետների տարանջատում մտցնել մինչև գնումների բազային միավորի 70-ապատիկի և դրանից ավելի բարձր գնով գնումների միջև:

13. Հոդված 13-ի երկրորդ մասում բացակայում է իմպերատիվությունը, մասնավորապես նշված է, որ «Հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն»: Կարծում ենք, որ գնումների բազային միավորի 70-ապատիկ և դրանից ավելի գնումների ժամանակ հայտերը պարտադիր պետք է ներկայացվեն հայերենից բացի, թե ռուսերեն, թե անգլերեն:

14. Հոդված 14-ի երրորդ մասում նշվում է, որ «Գնումների պլանները, ներառյալ փոփոխությունները հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի»: Պարզաբանված չեն այն ժամկետները, երբ գնումների պլանները (ներառյալ փոփոխությունները) պետք է հաստատվեն և որքան ժամանակ հետո տեղադրվեն տեղեկագրում: Ցանկալի կլիներ մանրամասնեցվեր, թե ինչպես է իրականացվելու սույն գործընթացը, մասնավորապես, արդյոք, պատվիրատուն ուղարկելու է այդ պլանները լիազոր մարմնին, որն էլ տեղադրելու է տեղեկագրում:

15. Հոդված 14-ի 6-րդ մասում նշվում է, որ «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում»: Հասկանալի է, որ նշված դրույթը ճիշդ է, որի պատճառով փորձ է կատարվել որոշակիորեն կանոնակարգել այն: Ելնելով դրանից՝ ցանկալի կլինի, որ նշյալ հիմքով իրականացված գնումների վիճակագրությունն ըստ պայմանագրերի մատչելի լինի հանրության համար (առանձին բաժնով), ինչը թույլ կտար առավել խորքային հանրային մոնիտորինգ իրականացնել:

16. Հոդված 15-ում ներկայացված են գնումների գործընթացի կարգավորման և համակարգման մասով գործողություններ: Չնայած նախագծում պահպանվել է թե՛ զծի դրույթը, սակայն դուրս է մնացել պատվիրատուներին վճարովի կամ անվճար խորհրդատվության և աջակցման հետ կապված հիմնահարցերի համախումբը: Բացի այդ, նախկինում ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման



առարկաների բնութագրերին մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատումը իրականացվում էր ԳԱԿ-ի կողմից: Առաջարկվող նախագծով սույն գործառույթը վերապահվում է լիազոր մարմին: Ըստ այդմ, ԳԱԿ-ի դերն ու նշանակությունը լրացուցիչ պարզաբանումների/քննարկումների կարիք ունի, քանի որ նախագծում ԳԱԿ-ի մասին որևէ խոսք չկա:

17. Մի փոքր վիճահարույց է գնման պարզեցված ընթացակարգերի բացակայությունը (Հոդված 16), սակայն սույն մասով կարծում ենք պետք է լինի ավելի առարկայական քննարկում:

18. Կրկին պետք է մատնանշել, որ Հոդված 17-ի 1-ին մասի չորրորդ կետում նշված «պետական և մասնավոր հատվածների գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքներն» ունեն առանձնահատկություններ, որոնք սահմանված չեն ոչ գործող օրենքում, ոչ նախագծում, և ոչ էլ ենթաօրենսդրության մեջ:

19. Օրենքի նախագծի մի շարք հոդվածներում (18, 19, 21) նշվում է «գնումների բազային միավորի հիսնապատիկը» որպես շեմ, սակայն երկրորդային օրենսդրությունում (168-Ն որոշում) կիրառվում է 70 մլն դրամի շեմը (գնումների բազային միավորի 70-ապատիկը):

20. Հոդված 23-ում նշվում է, որ «Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով», սակայն անդամների թվաքանակը և այլ հարցեր (շահերի բախում, մասնագիտական ունակություններ, և այլն), որոնց մի մասը կանոնակարգված է երկրորդային օրենսդրությամբ, օրենքով կանոնակարգան կարիք ունեն:

21. Հոդված 37-ի հինգերորդ մասում նշված է, որ «Էլեկտրոնային աճուրդի յուրաքանչյուր փուլում պատվիրատուն անհապաղ (առցանց) մասնակիցներին է տրամադրում նվազագույն բավարար տեղեկություններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ցանկացած պահի ճշտել իրենց զբաղեցրած հարաբերական տեղը»: Անհասկանալի է անհապաղ տրամադրումը: Միգուցե հարցում կատարելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Սահմանված չեն և հետևաբար լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն նվազագույն բավարար տեղեկությունների չափանիշները:

22. Ո՞վ է իրականացնելու Էլեկտրոնային աճուրդի միջոցով ստացված հայտերի և մասնակիցների փոխկապակցվածության ստուգումը:

23. Էլեկտրոնային աճուրդներում, ըստ էության, ամրագրվում է նվազագույն գինը որպես ընտրված մասնակցի որոշման չափանիշ, որը չի համապատասխանում միջազգային լավագույն փորձին:

24. Հոդված 43-ի առաջին մասում նշվում է, որ «Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բերված բողոքների քննումն իրականացնում է գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետև՝ խորհուրդ)»: Պարզ չէ, թե որտեղ է իրականացվելու բողոքների մուտքագրումը և հաշվառումը և դրանք խորհրդի քննության ներկայացումը (նախկինում դա ԳԱԿ-ն էր):

25. Հոդված 43-ի երկրորդ մասում նշվում է, որ «խորհուրդն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով, և իրենց պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ խորհրդի անդամները պաշտպանված են արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ



մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհուրդը և խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից: Բողոքի քննության ժամանակ նրանք չեն հանդիսանում քննվող գործի մասնակից և պարտավորեն բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն»: Նման ծավալուն շարադրանքի նպատակահարմարությունը կասկածելի է, քանի որ, ինչպես հասկանում ենք օրենքի նախագծից, անդամները հանդիսանալու են պետական ծառայողներ, իսկ նշված դրույթներն արդեն իսկ կանոնակագրված են նրանց բարեվարքության նորմերով:

26. Հոդված 43-ի ութերորդ մասում նշվում է «խորհուրդն իր գործունեության մասին ամենամյա հաղորդումներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով»: Այս մասով լրացուցիչ քննարկումների կարիք է առաջանում, մասնավորապես ԱԺ-ը ի՞նչ գործառնություններ ունի. հաստատում է, մերժում է, ի գիտություն է ընդունում: Կարծում ենք նաև, որ բողոքարկման խորհրդի մեջ որպես ինստիտուտ պետք է ներառել հանրային խորհուրդը, քաղաքացիական հասարակության այլ սուբյեկտներին և այլն: Պարզ չէ նաև բողոքարկման խորհրդի նման արմատական փոփոխությունների անհրաժեշտությունը, առավել ևս, որ դրանով որոշակիորեն զոհաբերվում է խորհրդի անկախությունը և ավելանում են կոռուպցիոն ռիսկերը:

27. Հոդված 46-ի յոթերորդ մասում նշվում է, որ «խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունել հետևյալ որոշումները՝

- 1) արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.
- 2) պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը լուծելու մասին որոշման.
- 3) վերանայելու ընդունված որոշումները»:

Անհասկանալի է, թե ինչու խորհուրդը չի կարող պայմանագիրը չեղյալ համարել:

28. Հոդված 47-ի երկրորդ մասում նշվում է, որ «խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է չկիրառվել, եթե պատվիրատուն խորհրդին գրավոր հայտնում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը»: Հասկանալի չեն, թե որոնք են այդ հիմքերը: Բացի այդ, եթե այս դրույթը կիրառվի, ինչպե՞ս կարող ենք հանրայնացնել դրա մասով ամփոփ վիճակագրությունը: